ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

5 փետրվարի 2016 թվականի N 9-Ա

«ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Շ. Թևանյանի անձնական դիմումը, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1.2016թ. փետրվարի 8-ից լուծել «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Շուշան Թևանյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը և օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Հիմք. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդված, Շ. Թևանյանի անձնական դիմումը:

2. 2016թ. փետրվարի 8-ից «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Նորա Իվանյանին մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք. Նորա Իվանյանի անձնական դիմումը:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հովհաննիսյան Հարություն	մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Գևորգյան Նունե	մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ասրյան Աշոտ	մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Թևանյան Շուշան	«Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, հանձնող
Իվանյան Նորա	«Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ընդունող:

4.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

2016թ.փետրվարի 5
ք. Կապան